Դաս 4. Ծրագրել ծառայություն և միջոցառումներ

Դուք կարող եք ուսուցանել այս դասն ամբողջությամբ կամ բաժանել այն ավելի կարճ հատվածների: Դասը հարմարեցրեք ձեր տեղական հանգամանքներին և ձեր քվորումի ու դասարանի նախագահության կարիքներին, տարիքին և հասկացողությանը:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՆԵԼ ՄԵԶ ՀԵՏԵՎԵԼ ՓՐԿԻՉԻՆ

Իր պատանեկության տարիներին Քրիստոսը «զարգանում էր իմաստութիւնով եւ հասակով, եւ շնորհքով՝ Աստուծոյ եւ մարդկանց մօտ» (Ղուկաս 2.52): Քվորումի և դասարանի նախագահության անդամներին խնդրեք քննարկել, թե ինչու են կարևոր ծառայությունն ու միջոցառումները: Դրանք ինչպե՞ս կարող են օգնել մեզ ավելի նմանվել Փրկիչին:

ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԿԱՏԱՐԵԼ ՏԻՐՈՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Խնդրեք նախագահության անդամներին վերանայել սկզբունքները, որոնք թվարկված են Ծառայության և միջոցառումների ուղեցույցներ երիտասարդների համար ձեռնարկում: Հանձնարարեք նրանց օգտագործել Ծառայության և միջոցառումների պլանավորում ձեռնարկը, որը կօգնի նրանց կազմել ծառայության և գործունեության մի քանի գաղափարների ցանկ՝ համաձայն այդ սկզբունքների: Խնդրեք նրանց ավել հանգամանալից կազմել այդ միջոցառումներից մեկի ծրագիրը՝ օգտագործելով Ծառայության և միջոցառումների մանրամասն ծրագիրը: Նախագահության հաջորդ ժողովին խնդրեք նրանց վերանայել իրենց ունեցած միջոցառումները, և թե որքան հաջող են դրանք անցել՝ համաձայն Ծառայության և միջոցառումների ուղեցույցներ երիտասարդների համար ձեռնարկի սկզբունքների:

ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐ

- Ծառայության և միջոցառումների գաղափարները հասանելի են ChildrenandYouth.ChurchofJesusChrist.org կայքում:
- *Ընդհանուր ձեռնարկ. ծառայել Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում,* բաժին 20, ChurchofJesusChrist.org

© 2020 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: 4/20: *Quorum and Class Presidency Training - Lesson 4*-ի թարգմանությունը: Armenian. PD60011122 201. Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում